մաբ կէտէր կնշմարին, Յանր Հանո-Ընկ-Ննէր կտեղանորա Ա՛ռմարանին վերայ, կարծելով թէ՝ սնոտի դատարկաբանութեամբ Ազգին կամ Եկեղեցոյ օգուտ մը կը հասցընեն։

Ձեզ մտածեր թէ՝ ինչպէս որ նաւապետ մը իւր նաւը ծովի ամէնի ալեաց մէջ թողցընելէն յառաջ ճարտար նաւաստիներ, գործունեայ զեկավարներ ու ամենայն պարագայքը կատարեալ, որ անակնկալ փորձութեանց, ծովային յեղուզակաց, յանկարծական փոթորիկներու առաջը կարողանայ առնել. այսպէս մեր Ազգին և Եկեղեցւոյ Հոգևոր Գլուխը և Տէրը ըստ չափու կարեաց հոգացած պէտք է լինի իւր դժուարաքիրտն ջանիւք հիմնարկած Ա՛ռմարանին ուսումնական ու անտեսական պիտոյքը անթերի լեցընելու և իւր բարեսէր նպատակին հասնելու, որ է ճշմարիտ լուսաւորութիւն Կուսակրօն Եկեղեցականաց Ազգիս և պայծառութիւն Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ։ Տացէ՞ Տէր յաջողութիւն։

Եւ որովհետև ձեր վերջին բարեմաղթութիւնն ալ հսկայական է իւր երգիծաբանական զօրութեամբը, կներէք ինձ ևս բարեմաղթել ձեզ համար, որ եթէ երբ և իցէ ընդունիք այս Ա՛ռմարանի մէջ Ա՛արտասանութեան ուսուցչապետութիւնը, որոյ մէկ ճիւղին մէջ, և յանուանէ Երգիծաբանութեան մէջ առանձին քանքար ունենալդ կցուցընէք, շատ լաւ կընէք, որովհետև այդ առարկան պակաս երևցաւ Օրագրին մէջ. դուք զայն ընդունելով նախ՝ 23 առարկան 24 ըրած կլինիք, երկրորդ՝ մէկ ուսուցչապետ աւելի կլինի Ա՛ռմարանի մէջ, և երրորդ՝ անյարմար կէտերը — Յանր Հանո-Ընկ-Նը ի բաց թողլով՝ ազգայնոց միտքը պղտորելէն գուցէ ձեռընթափ կլինիք։ Առ ժամս այսչափ։

"Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ,,։

Ի Վ-ՊԵՐՏՍԲՈՒՐԳ. ՀԱՅԿՈՐԴԻ.

Կ՚սպասէ՝ որ՝ այս նամակէս Պ. Մշոն ևս կհասկանայ և կընդունի իւր բաժինը։

ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՔ ՀԱՅՈՑ ԹԷԼԱՒԻ.

Մեր ազգայինք՝ զանազան գաւառներ ցրուած լինելով՝ ենթարկուած են և զանազան փոփոխութեանց, բայց որովհետև իմ՝ նպատակ է քաղաքիս երկսեռ ուսումնարանաց վերայ մասնաւոր խօսել, վասնորոյ կուզեմ գրիչս նորա վերայ։

Թէլաւ՝ բաղկանալով Հայերից 800 տուն հասարակութենէ՝ ունի երկու հոյաշէն ուսումնարան. որոց մինը՝ կանուանի Վարդանեան Ուսումնարան արական սեռի, իսկ միւսը Գայիանեան Ուսումնարան իգական սեռի, որք ունին անշարժ կալուածք՝ որ կօժանդակեն տարեկան 700 ից ց 1000 ռուբլի։

Բնակիչներից՝ ո՛չ ոք չգիտէ Հայերէն խօսիլ և գրել բացի քահանայից և . . . . այլ կխօսին ամենեքեան վրացերէն, կգրեն ամենեքեան վրացերէն. թէև ժողովրդականք ունին ըստ բաւականին ջերմեռանդութիւն առ եկեղեցին, (ինչպէս ամսոյս 2ին երկու ընկեր փարթամ վաճառականք՝ Աղայ Գասպար տէր Սարգսեան և Աղայ Գասպար Մըղեսեանց Նուիրեցին տեղւոյս սուրբ Գէորգ աւագ եկեղեցւոյն՝ Մոսկովից բերել տուած մի արծաթեայ ոսկեզօծ ականակուռ սաղաւարտ, միոսկեթել կերպասեայ խաս շուրջառ, ի նոյնոյ՝ սեղանի ծածկոց, մի փոքր ուրար և երկու ուրար, և երկու կապտագոյն ծաղկեայ ատլաս ժամաշապիկ, ընդ ամենի արժողութիւնն է չորս հարիւր ռուբլի). բայց եթէ այս ջերմեռանդութեան համաձայն ունենային խօսիլ և գրել հայերէն և եկեղեցական ժամասացութիւնը հասկանալ ըստ կարելւոյն, ո՞հ, յայնժամ ո՛ւրան գերազանց պիտի գտնուէին և նախանձելի բարեպաշտական գործով. բայց այս կողմանէ բոլորովին զուրկ են, և սոյնգունակ

խղճալի դրութեան մէջ գտնուող ժողովրդոց փոխանակ մի որ և իցէ տեղից, մի անակնուելի լուսաւորեալ ազգասէրներ դուրս գալով՝ ի սէր ազգութեան տարածէ նոցա մէջ հայութեան ոգի և հայ լեզու. ընդհակառակն այսպիսի տեղերից պրպանները լցնելու յոյս ունենալով կեղծեալ ազգասէր և սրտացաւ ուսումնականներ դուրս եկած են, որոնք աչքը ուղղելու տեղ՝ գլուխն էլ կտրել են. բայց ներկայ տարիներիս՝ կարգուելով գործակատար և միանգամայն տեսուչ երկսեռ ուսումնարանաց տեղւոյս բարեկրոն Գէորգ աւագ քահանայն Տէր Սարգսեանց, հին Հոգաբարձուաց արձակուելէն զկնի՝ սկսեց նա մեծ ջանքով նոր և ընտրեալ Հոգաբարձուք մեծաւ յորդորմամբ նոցա տեղ հաստատել, որովհետև ուսումնարանք ընկած լինելով ի ներքոյ (700 բուրլի) պարտուց՝ ոչ ոք չէին իշխել հոգաբարձական պաշտօնին. կարգաւորեց ուսուցչաց ռոճիկները և յընթացս երկուց ամաց վճարեց վերոյիշեալ պարտքը, և ի ներկայիս գտնուած գումարն էլ յայլ և այլ աղբիւրներէ կաշխատի շահացնել, ինչպէս յանցելումն մի բարեպաշտուհի վրացի տիկնոջ բարենպատակ յառաջարկութիւն արեց, և որ նորա առաջարկութեան համաձայն նուիրեց յօգուտ երկսեռ ուսումնարանաց 100 ռուբլի, որոյ փոխարէն 50 վերստ ճանապարհաւ նորա հայապդի կողակցոյ մարմինը հանդէսով բերեց և թաղեց մերձ գերեզմանատան եկեղեցւոյն տեղւոյս, և հաւաստի տեղեկանալով որ հայերէն խօսակցութիւնը ըստ մեծի մասին և միանգամայն կարելի է իրական սեռի ձեռօք տարածել հասարակութեան մէջ, վասն որոյ ճիգն թափեց որ օրիորդաց ուսումնարանը բարեկարգ և անթերի ընթացք ունենայ, որոյ վասն մեծաւ թախանձանօք հրաւիրեց պարկեշտուհի Տասիայ Մկրտումեանցը՝ վարժապետուհի և հոգատար ամենայն հարկաւորութեանց, վասն զի օրիորդք վճարելով ամսական 2 ռուբլի՝ կճաշեն ուսումնարանի սեղանատան, յետ ճաշելոյն կալարապին ձեռագործութեամբ մինչ երեկոյեան 6 ժամը, ապա կարձակուին գնալ իւրեանց տուն. աշակերտուհիք բաւականաչափ հայերէն խօսալու և կարդալու մէջ յառաջացած են, որոց միջից աշակերտուհի Դարեջան Մկրտումեանցը մաքուր և հայացի արտաբերութեամբ կարդաց զատկի շաբաթ երեկոյեան «Դանիէլին», որ մեծապէս զարմացրեց ժողովրդոց բազմութիւնը, որոց շատերը խրախուսելով տուին իրանց շաղկունք և տղայքը Ուսումնարան, և սոյնգունակ նոցին ընթացքը յառաջ գնալով հարցաքննութիւն սկսուեց Յունիսի 25ին, նախ սուրբ Վարդանեան ուսումնարանին, ուր ժողովուած էին յիսուն անձինք հրաւիրեալ իշխանք. աշակերտք համաձայն ազիւսակին գերազանց գրատն, և պարգևաբաշխութեամբ արձակեցան. իսկ 27ին սկսուեց հարցաքննութիւն սուրբ Գայիանեան Ուսումնարանին, ուր ժողովուած էին 100 հն աւել իշխանուհի տիկնայք, նոյնպէս համաձայն ազիւսակին գերազանց գրատն. օրիորդ Դարեջան Մկրտումեանցը կարդաց հետևեալ ճառը, և յետ որոյ խօսեց տէր Գէորգ Աւագ քահանայն թէ՝ «Ուրախ եմ որ այսօր համաքաղաքացեացս հետ տեսի ուսումնարանաց յառաջադիմութիւնը, վիճակաւոր Առաջնորդը միշտ ինձ կը կրկնէր, թէ, որովհետև մեր Վեհափառ Հայրապետի միակ ցանկութիւնն է բոլոր վիճակաց ուսումնարանների յառաջադիմութիւնը, վասն որոյ և ես կցանկամ իմ վիճակիս մէջ գտնուած ուսումնարանք բարեկարգ ընթացք ունենան. ահա և սորանով կատարեցինք այսօր և Ձեր ուսումնասէր մեծիմաստ Հօր ցանկութիւնը», ևն. ապա օրիորդաց ձեռագործութիւնք յօգուտ ուսումնարանաց տեղւոյս ստորագրութեամբ իշխանուհեաց վիճակարկութիւն եղաւ, և պարգևաբաշխութեամբ աշակերտուհիք ևն արձակեցան,

ԳՐԻԳՈՐ Դ. Ց. ՄԱՏԹԷՈՍԵԱՆՑ.

Ամսագրոյս թիւոթից անձկութիւնն չներեցին ցուցակները և [illegible] բակելոյ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՐՄՈՒՆՔ

Խմբագրոյ-Ընթերցողաց.

Մեր լուսաւորեալ և քաղաքակիրթ եղբայրներէն շատեր կվկայեն, որ ներկայ ոսկեղէն իններորդ դարուս մէջ աշխարհիս զանազան ան-